### *4.5. ՀՀ սահմանային անցման կետերում ժամանողների և մեկնողների շրջանում 2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. օգոստոս ամիսներն իրականացված ընտրանքային հետազոտության նախնական արդյունքները*

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալության (ԶԶՀԳ) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (ՄՄՀՀ) ծրագրի համագործակցությամբ 2006թ. սեպտեմբերից[1], իրականացնում է ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտություն հանրապետության բոլոր սահմանային անցման կետերում, «Զվարթնոց» և «Գյումրի»[2] օդանավակայաններում, «Այրում» երկաթուղային կայարանում, ինչպես նաև «Մեղրի», «Գոգավան», «Բավրա» և «Բագրատաշեն» անցումային կետերում:

> *Ըստ ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ԶՀԿ) մեթոդաբանության, «զբոսաշրջիկ» է համարվում ցանկացած անձ, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր՝ ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեին ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:*
>
> *Ըստ նույն մեթոդաբանության, բոլոր ճանապարհորդները, ովքեր զբաղվում են զբոսաշրջությամբ, համարվում են «այցելուներ», որոնք էլ իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ «զբոսաշրջիկներ» (գիշերող այցելուներ) և «մեկօրյա այցելուներ» (առանց գիշերելու):*

Հարցումն իրականացվել է ժամանողների և մեկնողների 3% ընտրանքի պարագայում, յուրաքանչյուր ամիս 7 ամբողջական օր տևողությամբ, նպատակ ունենալով հարցումն անցկացնել յուրաքանչյուր ամսվա մեջ ընդգրկված շաբաթվա բոլոր օրերը:

***Ներգնա*** զբոսաշրջիկների մասին տեղեկատվություն հավաքագրելու նպատակով հարցումն իրականացվել է **<u>մեկնողների շրջանում</u>**, իսկ ***արտագնա*** զբոսաշրջիկների մասին՝ **<u>ժամանողների շրջանում</u>**, այսինքն երբ ճանապարհորդությունը համարվում է արդեն ավարտված և հետևաբար հարցազրույցը շարունակվել է <u>մեկնող ՀՀ ոչ ռեզիդենտների</u> ու <u>ժամանող ՀՀ ռեզիդենտների հետ</u>:

Ներկա պահին ամփոփվել են հետազոտության ամբողջ ժամանակահատվածի արդյունքները և ստորև ներկայացվում են դրանցից առավել կարևորություն ունեցող որոշ ամփոփ ցուցանիշներ: Միաժամանակ, հարկ է նշել, որ բերած տվյալները արտացոլում են հարցմանը մասնակցած այցելուների պատասխանների ամփոփված արդյունքները, և դեռևս չեն իրականացվել ստուգաճշտման և շեղումների գծով հարթեցման, միջինացման ու ընտրանքի արդյունքները գլխավոր համակցության վրա տարածման աշխատանքները (ներկայումս այդ աշխատանքներն իրականացվում են և արդյունքները կիրապարակվեն 2007թ. վերջին):

---

*[1] Առաջին փուլը 6 ամիս տևողությամբ, որից հետո համաձայն եռակողմ փոխըմբռնման հուշագրի, այն շարունակվելու է ևս 6 ամիս՝ մինչև 2007թ. օգոստոսի վերջը:*

*[2] «Գյումրի» օդանավակայանի վերանորոգման պատճառով հետազոտության աշխատանքները 2007թ. հուլիս-օգոստոս ամիսներին չի իրականացվել:*

Այնուհանդերձ, դիտարկված 12 ամիսների ընթացքում հարցմանը մասնակցել են 22185 ժամանողներ և 18339 մեկնողներ, ընդ որում, համապատասխանաբար՝ 82 և 113 հարցաթերթ (ակնհայտ սխալներով և մեծ շեղումներով) ճանաչվել է անվավեր:

**Հարցմանը մասնակցած ժամանողների և մեկնողների բաշխվածությունն ըստ սահմանային անցման կետերի, 2006թ. սեպտեմբերից 2007թ. օգոստոս ամիսներին**
*(առանց անվավեր ճանաչված հարցաթերթերի)*

| | Ժամանողներ | | Մեկնողներ | |
|---|---|---|---|---|
| | թվաքանակը, *մարդ* | տեսակարար կշիռը % | թվաքանակը, *մարդ* | տեսակարար կշիռը, % |
| **Ընդամենը** | **22185** | **100** | **18339** | **100** |
| այդ թվում՝ | | | | |
| **Օդային տրանսպորտով** | **13946** | **62.9** | **10644** | **58.0** |
| «Գյումրի» օդանավակայան | 671 | 3.0 | 502 | 2.7 |
| «Զվարթնոց» օդանավակայան | 13275 | 59.8 | 10142 | 55.3 |
| **Երկաթուղային տրանսպորտով** | **736** | **3.3** | **683** | **3.7** |
| «Այրում» կայարան | 736 | 3.3 | 683 | 3.7 |
| **Ավտոմոբիլային տրանսպորտով** | **7503** | **33.8** | **7012** | **38.2** |
| «Բագրատաշեն» | 3496 | 15.8 | 3328 | 18.1 |
| «Բավրա» | 1468 | 6.6 | 1235 | 6.7 |
| «Գոգավան» | 1351 | 6.1 | 1319 | 7.2 |
| «Մեղրի» | 1188 | 5.4 | 1130 | 6.2 |

Հարցմանը մասնակցած 22185 ժամանողներից 11086-ն ունեցել են ՀՀ ռեզիդենտի կարգավիճակ, իսկ 18339 մեկնողներից ՀՀ ոչ ռեզիդենտի կարգավիճակ են ունեցել 9128-ը:

Միևնույն ժամանակ, ռեզիդենտության կարգավիճակ ունեցող հարցվողներից թվով 1075 ժամանող և 1098 մեկնող ուղևորներ իրենց ճանապարհորդությունը կազմակերպել են մինչև 24 ժամ տևողությամբ (ունեցել են այցելուի կարգավիճակ), 47 ժամանող և 391 մեկնող եղել են դեսպանատների կամ զինվորական ստորաբաժանումների աշխատակիցներ, և ըստ միջազգային մեթոդաբանության, չեն համարվում զբոսաշրջիկներ և նրանց հետ հարցազրույցը չի շարունակվել: Հարկ է նշել, որ 1571 ժամանողների և 369 մեկնողների ճանապարհորդության հիմնական նպատակը եղել է աշխատանքի արդյունքում եկամուտ ստանալը, որոնք նույնպես զբոսաշրջիկներ չեն համարվում, սակայն զուտ վիճակագրական նպատակներից ելնելով, նրանց հետ հարցումը շարունակվել է և ստորև ներկայացված ելքային աղյուսակներում ներառված են նաև նրանց պատասխանները:

Արդյունքում, առանց աշխատանքի նպատակով այցելածների, հարցմանը մասնակցած ընդամենը ժամանողներից 8393 անձինք կամ 37.8%-ն են համարվել Հայաստանից մեկնած արտագնա զբոսաշրջիկներ, իսկ ընդամենը մեկնողներից 7270 կամ 39.6%-ը՝ ներգնա զբոսաշրջիկներ:

### Արտագնա ճանապարհորդների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի, 2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. օգոստոս ամիսներին[1], %

| Երկրները | Գործնական | Աշխատանքի | Կրթության | Բուժման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշակութային միջոցառումների մասնակցության | Այցելություն հարազատներին, ընկերներին | Այլ | Միջին ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | 26.01 | 15.80 | 1.49 | 2.15 | 12.24 | 2.00 | 32.30 | 8.01 | 100. 0 |
| այդ թվում՝ | | | | | | | | | |
| Ռուսաստան | 7.45 | 9.68 | 0.59 | 1.76 | 4.62 | 0.83 | 17.15 | 2.87 | 44.95 |
| Վրաստան | 7.53 | 0.42 | 0.02 | 0.23 | 2.65 | 0.14 | 10.43 | 3.28 | 24.70 |
| ԱՊՀ Այլ երկրներ | 0.92 | 0.85 | 0.01 | 0.08 | 0.36 | 0.06 | 1.39 | 0.30 | 3.97 |
| Իրան | 1.69 | 2.50 | 0.02 | 0.02 | 0.20 | 0.12 | 0.87 | 0.48 | 5.90 |
| ԱՄՆ | 0.25 | 0.06 | 0.11 | 0.01 | 0.13 | - | 0.44 | 0.02 | 1.03 |
| Ֆրանսիա | 0.65 | 0.03 | 0.05 | 0.01 | 0.64 | 0.21 | 0.28 | 0.02 | 1.90 |
| Գերմանիա | 0.64 | 0.09 | 0.10 | 0.04 | 0.22 | 0.09 | 0.26 | 0.07 | 1.52 |
| Հունաստան | 0.38 | 0.52 | 0.01 | - | 0.41 | 0.03 | 0.25 | 0.02 | 1.63 |
| Սիրիա | 0.43 | 0.08 | 0.02 | - | 0.05 | 0.01 | 0.29 | 0.08 | 0.97 |
| Այլ արևմտաեվրոպական երկրներ | 0.44 | 0.13 | 0.15 | - | 0.20 | 0.03 | 0.20 | 0.03 | 1.19 |
| Մեծ Բրիտանիա | 0.41 | 0.03 | 0.17 | - | 0.20 | 0.07 | 0.16 | 0.05 | 1.10 |
| Իտալիա | 0.19 | - | 0.02 | - | 0.20 | 0.02 | 0.02 | 0.04 | 0.49 |
| Ճապոնիա | 0.07 | 0.01 | 0.02 | - | - | - | - | 0.01 | 0.11 |
| Կանադա | 0.01 | - | - | - | 0.01 | 0.01 | 0.02 | - | 0.05 |
| Արգենտինա | - | - | - | - | 0.01 | 0.01 | - | - | 0.02 |
| Լիբանան | 0.03 | - | - | - | - | - | 0.01 | - | 0.04 |
| Այլ երկրներ | 4.90 | 1.39 | 0.19 | - | 2.33 | 0.36 | 0.52 | 0.73 | 10.43 |

### Ներգնա ճանապարհորդների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի, 2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. օգոստոս ամիսներին, %

| Երկրները | Գործնական | Աշխատանքի | Կրթության | Բուժման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշակութային միջոցառումների մասնակցության | Այցելություն հարազատներին, ընկերներին | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | 22.39 | 4.84 | 1.81 | 3.62 | 11.62 | 1.54 | 44.81 | 9.36 | 100 |
| | | | | | | | | | |
| Ռուսաստան | 4.99 | 0.51 | 0.09 | 1.30 | 1.33 | 0.43 | 22.25 | 3.95 | 34.85 |
| Վրաստան | 5.50 | 0.28 | 0.81 | 2.02 | 2.17 | 0.16 | 13.60 | 3.57 | 28.10 |
| ԱՊՀ այլ երկրներ | 0.75 | 0.11 | 0.07 | 0.07 | 0.20 | 0.03 | 1.55 | 0.33 | 3.08 |
| Իրան | 2.40 | 2.91 | 0.34 | 0.08 | 0.53 | 0.05 | 1.23 | 0.21 | 7.76 |
| ԱՄՆ | 1.33 | 0.14 | 0.01 | 0.01 | 1.10 | 0.13 | 1.51 | 0.32 | 4.56 |
| Ֆրանսիա | 0.80 | 0.11 | 0.01 | 0.03 | 1.27 | 0.07 | 1.16 | 0.11 | 3.54 |
| Այլ արևմտաեվրոպական երկրներ | 0.87 | 0.09 | 0.01 | 0.01 | 0.67 | 0.12 | 0.35 | 0.16 | 2.28 |
| Գերմանիա | 1.04 | 0.12 | 0.07 | 0.01 | 0.91 | 0.08 | 0.59 | 0.11 | 2.91 |
| Մեծ Բրիտանիա | 1.04 | 0.12 | 0.01 | - | 0.42 | 0.05 | 0.25 | 0.01 | 1.90 |
| Սիրիա | 0.21 | 0.01 | 0.16 | 0.01 | 0.24 | 0.04 | 0.42 | 0.07 | 1.16 |
| Կանադա | 0.20 | 0.01 | - | - | 0.26 | 0.03 | 0.17 | 0.05 | 0.72 |
| Լիբանան | 0.05 | - | 0.03 | - | 0.17 | 0.01 | 0.17 | 0.05 | 0.49 |
| Իտալիա | 0.28 | 0.11 | - | - | 0.26 | 0.07 | 0.08 | 0.07 | 0.85 |
| Հունաստան | 0.12 | 0.03 | - | 0.01 | 0.26 | 0.01 | 0.38 | 0.03 | 0.84 |
| Ճապոնիա | 0.16 | 0.04 | - | - | 0.26 | 0.03 | - | 0.04 | 0.53 |
| Բրազիլիա | 0.03 | 0.01 | - | - | 0.01 | - | 0.01 | 0.01 | 0.08 |
| Արգենտինա | 0.01 | 0.03 | - | - | - | - | 0.03 | - | 0.07 |
| Այլ երկրներ | 2.64 | 0.22 | 0.20 | 0.07 | 1.56 | 0.24 | 1.06 | 0.29 | 6.27 |

[1] *Այս և հաջորդ աղյուսակներում ներառված են նաև աշխատանքի նպատակով ճանապարհորդությունը կազմակերպած անձիք, որոնք, զբոսաշրջիկների հետ միասին, ըստ միջազգային մեթոդաբանության համարվում են «ճանապարհորդներ»:*

## Արտագնա ճանապարհորդների սեռատարիքային բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի, 2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. օգոստոս ամիսներին,%

| Սեռը և տարիքը | Գործնական | Աշխատանքի | Կրթության | Բուժման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցության | Այցելություն հարազատներին, ընկերներին | Այլ | Միջին ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տղամարդ | 67.0 | 85.2 | 45.3 | 50.5 | 52.0 | 60.3 | 40.2 | 50.4 | 57.2 |
| Կին | 33.0 | 14.8 | 54.7 | 49.5 | 48.0 | 39.7 | 59.8 | 49.6 | 42.8 |
| **Ընդամենը** | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| մինչև 17 տարեկան | 0.2 | 0 | 5.4 | 2.3 | 3.1 | 8.5 | 3.1 | 0.9 | 1.8 |
| 18-35 տարեկան | 28.4 | 26.4 | 80.4 | 19.6 | 54.3 | 52.8 | 29.6 | 25.6 | 32.5 |
| 36-55 տարեկան | 65.0 | 68.9 | 14.2 | 47.7 | 38.2 | 34.7 | 46.1 | 59.2 | 54.0 |
| 56 և ավելի | 6.3 | 4.5 | 0 | 30.4 | 4.4 | 4.0 | 21.2 | 14.3 | 11.6 |
| **Ընդամենը** | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| Միջին տարիքը, *տարի* | 40.5 | 40.6 | 28.1 | 45.1 | 34.4 | 33.0 | 41.6 | 42.0 | 40.0 |

## Ներգնա ճանապարհորդների սեռատարիքային բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի, 2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. օգոստոս ամիսներին,%

| Սեռը և տարիքը | Գործնական | Աշխատանքի | Կրթության | Բուժման | Հանգստի ժամանցի | Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցության | Այցելություն հարազատներին, ընկերներին | Այլ | Միջին ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տղամարդ | 81.1 | 85.4 | 60.9 | 39.9 | 56.4 | 66.7 | 49.3 | 57.1 | 59.9 |
| Կին | 18.9 | 14.6 | 39.1 | 60.1 | 43.6 | 33.3 | 50.7 | 42.9 | 40.1 |
| **Ընդամենը** | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| մինչև 17 տարեկան | 0.1 | 0 | 6.5 | 0.7 | 0.3 | 0.9 | 2.0 | 0.7 | 1.2 |
| 18-35 տարեկան | 27.6 | 29.9 | 82.6 | 18.5 | 33.9 | 62.4 | 24.5 | 25.3 | 28.0 |
| 36-55 տարեկան | 63.3 | 62.2 | 7.2 | 56.2 | 46.7 | 24.8 | 54.6 | 57.8 | 55.0 |
| 56 և ավելի | 9.0 | 7.6 | 3.6 | 24.6 | 19.1 | 12.0 | 18.9 | 16.2 | 15.7 |
| **Ընդամենը** | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| Միջին տարիքը, *տարի* | 41.1 | 40.4 | 27.9 | 45.0 | 41.3 | 34.7 | 42.6 | 42.4 | 41.7 |

## Արտագնա ճանապարհորդների ճանապարհորդության տևողությունն ըստ կացարանի տեսակի և այցելության նպատակի 2006թ. սեպտեմբերից 2007թ. օգոստոս ամիսներին, օր

| Տեղաբաշխման վայրը | Գործնա-կան | Աշխա-տանքի | Կրթու-թյան | Բուժ-ման | Հանգստի և ժաման-ցի | Մարզական, մշակութային միջոցա-ռումներին մասնակ-ցության | Այցելություն հարազատ-ներին, ընկեր-ներին | Այլ | Միջին ընդա-մենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հյուրանոց | 10.2 | 9.0 | 22.6 | 17.4 | 12.7 | 12.3 | 7.1 | 9.4 | 10.9 |
| Վարձով բնակարան | 30.3 | 176.8 | 91.8 | 96.6 | 21.5 | 35.8 | 105.2 | 93.4 | 114.8 |
| Մ/Ն[1] (B&B ), պանդոկ | 9.9 | 7.5 | 175.3 | 28 | 21.3 | 30.0 | 9.5 | 7.4 | 13.1 |
| Բարեկամի կամ հարազատի տանը | 18.9 | 139.3 | 128.0 | 74.0 | 48.9 | 31.7 | 42.6 | 26.5 | 46.8 |
| Այլ | 10.1 | 146.2 | 150.2 | 43.6 | 23.8 | 25.8 | 14.7 | 45.2 | 61.7 |
| **Մեկ զբոսաշրջիկի հաշվով միջին գիշե-րած օրերի քանակը** | **14.1** | **133.2** | **117.9** | **63.2** | **26.8** | **18.3** | **41.9** | **30.3** | **47.0** |

## Ներգնա ճանապարհորդների ճանապարհորդության տևողությունն ըստ կացարանի տեսակի և այցելության նպատակի 2006թ սեպտեմբերից 2007թ. օգոստոս ամիսներին, օր

| Սեռը և տարիքը | Գործնա-կան | Աշխա-տանքի | Կրթու-թյան | Բուժ-ման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշակութային միջոցա-ռումներին մասնակցու-թյան | Այցելություն հարազատ-ներին, ընկեր-ներին | Այլ | Միջին ընդա-մենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հյուրանոց | 6.3 | 9.5 | 7.3 | 12.5 | 8.3 | 9.0 | 8.7 | 9.9 | **7.5** |
| Վարձով բնակարան | 18.3 | 44.3 | 89.8 | 42.3 | 16.0 | 17.4 | 26.2 | 43.5 | **37.2** |
| Մ/Ն[1] (B&B ), պանդոկ | 6.2 | 5.5 | 200 | 0 | 6.3 | 12.5 | 9.3 | 0 | **7.5** |
| Բարեկամի կամ հարազատի տանը | 12.8 | 58.1 | 49.3 | 21.1 | 15.6 | 21.9 | 24.5 | 16.8 | **22.9** |
| Առողջարաններ | 2.3 | 0 | 0 | 15.2 | 5.7 | 2.0 | 7.9 | 8.0 | **10.8** |
| Այլ | 10.0 | 30.5 | 84.2 | 12.7 | 10.1 | 12.2 | 39.5 | 29.5 | **25.9** |
| **Մեկ զբոսաշրջիկի հաշվով միջին գիշե-րած օրերի քանակը** | **8.5** | **22.8** | **73.7** | **21.2** | **10.1** | **12.7** | **24.8** | **18.9** | **19.3** |

## Ներգնա ճանապարհորդների տարածաշրջանային այցելությունների բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի 2006թ սեպտեմբերից 2007թ. օգոստոս ամիսներին,%

| Տարածաշրջանը | Գործնա-կան | Աշխա-տանքի | Կրթու-թյան | Բուժ-ման | Հանգստի և ժաման-ցի | Մարզական, մշա-կութային միջոցա-ռումներին մասնակցության | Այցելություն հարազատ-ներին, ընկեր-ներին | Այլ | Միջին ընդա-մենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| Ք. Երևան | 58.2 | 65.4 | 43.4 | 44.6 | 17.0 | 34.1 | 34.8 | 39.1 | 35.1 |
| Արագածոտն | 2.3 | 0.9 | 3.6 | 3.9 | 6.1 | 4.3 | 5.4 | 7.5 | 5.0 |
| Արմավիր | 9.8 | 5.5 | 10.6 | 9.3 | 12.9 | 12.5 | 12.5 | 12.7 | 11.9 |
| Գեղարքունիք | 6.7 | 5.6 | 9.9 | 8.3 | 12.9 | 11.6 | 8.9 | 7.7 | 9.5 |
| Կոտայք | 5.8 | 5.1 | 12.4 | 7.7 | 13.7 | 14.0 | 9.6 | 8.3 | 10.0 |
| Լոռի | 4.5 | 3.9 | 3.3 | 2.5 | 6.4 | 2.7 | 5.5 | 5.9 | 5.4 |
| Շիրակ | 2.8 | 2.6 | 6.9 | 8.1 | 3.4 | 5.2 | 9.6 | 6.2 | 6.3 |
| Տավուշ | 4.6 | 3.2 | 2.2 | 1.5 | 7.1 | 4.6 | 4.4 | 3.6 | 5.0 |
| Վայոց Ձոր | 1.3 | 1.3 | 1.5 | 11.2 | 5.7 | 2.7 | 2.4 | 2.9 | 3.4 |
| Արարատ | 2.2 | 1.7 | 4.0 | 1.2 | 8.0 | 4.6 | 3.9 | 4.2 | 4.7 |
| Սյունիք | 0.9 | 3.6 | 0.7 | 0.6 | 3.6 | 1.5 | 1.6 | 0.8 | 2.0 |
| ԼՂՀ | 1.0 | 1.1 | 1.5 | 1.2 | 3.2 | 2.1 | 1.4 | 1.1 | 1.8 |
| **Մեկ ճանապարհորդի միջին այցելած վայրերի քանակը** | **1.6** | **1.4** | **2.0** | **1.9** | **5.6** | **2.8** | **2.2** | **1.9** | **2.4** |

---

[1] *Մահճակալ և նախաճաշ:*

## Ներգնա ճանապարհորդների կողմից ծառայությունների և հարմարությունների գնահատման կառուցվածքը, 2006թ. սեպտեմբերից 2007թ. օգոստոս ամիսներին, %

| Ծառայություններ և հարմարություններ | Գերազանց (5) | Լավ (4) | Բավարար (3) | Վատ (2) | Շատ վատ (1) | Ընդամենը | Միջին գնահա-տականը |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հյուրանոցների | 38.2 | 52.2 | 7.7 | 1.4 | 0.4 | 100 | 4.3 |
| Ռեստորանների | 45.8 | 43.4 | 9.4 | 1.1 | 0.3 | 100 | 4.3 |
| Հանգստի գոտիների | 53.9 | 33.6 | 8.8 | 2.9 | 0.7 | 100 | 4.4 |
| Տուր-օպերատորների | 41.5 | 47.7 | 9.7 | 0.7 | 0.4 | 100 | 4.3 |
| Գների մակարդակը | 9.3 | 38.5 | 30.8 | 13.3 | 8.0 | 100 | 3.3 |
| Միջազգային տրանսպորտի | 29.6 | 50.6 | 16.3 | 2.7 | 0.8 | 100 | 4.1 |
| Ներքին ճանապարհների | 7.1 | 36.5 | 26.8 | 17.2 | 12.4 | 100 | 3.1 |
| Տեսարժան վայրերի | 66.9 | 27.7 | 4.6 | 0.5 | 0.3 | 100 | 4.6 |
| Զբոսավարի ծառայությունների | 47.5 | 36.0 | 11.2 | 2.3 | 3.0 | 100 | 4.2 |
| Սահմանային ծառայությունների արդյունավետությունը | 22.9 | 48.7 | 19.9 | 6.0 | 2.5 | 100 | 3.8 |

## Մեկ արտագնա ճանապարհորդի ծախսերի կառուցվածքն ըստ այցելության նպատակի և ճանապարհորդության կազմակերպման, 2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. օգոստոս ամիսներին*

| | Գործնա-կան | Աշխա-տանքի | Կրթու-թյան | Բուժ-ման | Հանգստի և ժամանց-ի | Մարզական, մշակութային միջոցառում-ների մասնակ-ցության | Այցելություն հարազատ-ների, ընկեր-ների | Այլ | Միջին ընդա-մենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Տուր-փաթեթով** | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսերը, *ԱՄՆ դոլար* | X | X | X | X | 1451.3 | X | X | X | 1451.3 |
| Ճանապարհորդության միջին տևողությունը, *օր* | X | X | X | X | 12.1 | X | X | X | 12.1 |
| Օրական միջին ծախսը, *ԱՄՆ դոլար* | X | X | X | X | 120.3 | X | X | X | 120.3 |
| **Ինքնուրույն** | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսերը,*ԱՄՆ դոլար* | 1599.9 | 1424.8 | 1585.3 | 2046.0 | 922.8 | 920.3 | 447.2 | 980.9 | 1025.1 |
| Ճանապարհորդության միջին տևողությունը, *օր* | 15.2 | 136.7 | 123.0 | 69.4 | 32.1 | 19.2 | 42.3 | 30.8 | 49.7 |
| Օրականմիջին ծախսը, *ԱՄՆ դոլար* | 105.0 | 10.4 | 12.9 | 29.5 | 28.8 | 48.0 | 10.6 | 31.8 | 20.6 |
| **Տուր-փաթեթով և ինքնուրույն** | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսերը,*ԱՄՆ դոլար* | 1599.9 | 1424.8 | 1585.3 | 2046.0 | 1082.9 | 920.3 | 447.2 | 980.9 | 1048.2 |
| Ճանապարհորդության միջին տևողությունը, *օր* | 15.2 | 136.7 | 123.0 | 69.4 | 28.0 | 19.2 | 42.3 | 30.8 | 48.8 |
| Օրական միջին ծախսը, *ԱՄՆ դոլար* | 105.0 | 10.4 | 12.9 | 29.5 | 38.7 | 48.0 | 10.6 | 31.8 | 21.5 |

* *Ծանոթություն՝ ծախսերի մեջ ներառված չեն հայաստանյան տրանսպորտային միջոցներով իրականացված փոխադրումների արժեքը և տուր-փաթեթի արժեքի շուրջ 20%-ը, որը որպես եկամուտ մնում է տուր-օպերատորներին (հայաստանյան ռեզիդենտներին):*

Մեկ ներգնա ճանապարհորդի ծախսերի կառուցվածքն ըստ այցելության նպատակի և ճանապարհորդության կազմակերպման, 2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. օգոստոս ամիսներին*

| | Գործնական | Աշխատանքի | Կրթության | Բուժման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշակութային միջոցառումների մասնակցության | Այցելություն հարազատներին, ընկերներին | Այլ | Միջին ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Տուր-փաթեթով** | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսերը, *ԱՄՆ դոլար* | X | X | X | X | 2350.9 | X | X | X | 2350.9 |
| Ճանապարհորդության միջին տևողությունը, *օր* | X | X | X | X | 10.4 | X | X | X | 10.4 |
| Օրական միջին ծախսը, *ԱՄՆ դոլար* | X | X | X | X | 225.5 | X | X | X | 225.5 |
| **Ինքնուրույն** | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսերը, *ԱՄՆ դոլար* | 645.2 | 618.0 | 1181.7 | 717.5 | 1090.8 | 1158.6 | 582.3 | 664.4 | 686.6 |
| Ճանապարհորդության միջին տևողությունը, *օր* | 8.7 | 24.6 | 75.2 | 25.2 | 11.7 | 13.1 | 25.2 | 19.0 | 20.2 |
| Օրական միջին ծախսը, *ԱՄՆ դոլար* | 73.7 | 25.2 | 15.7 | 28.5 | 93.5 | 88.2 | 23.1 | 35.0 | 33.9 |
| **Տուր-փաթեթով և ինքնուրույն** | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսերը,*ԱՄՆ դոլար* | 645.2 | 618.0 | 1181.7 | 717.5 | 1294.8 | 1158.6 | 582.3 | 664.4 | 724.1 |
| Ճանապարհորդության միջին տևողությունը, *օր* | 8.7 | 24.6 | 75.2 | 25.2 | 11.5 | 13.1 | 25.2 | 19.0 | 20.0 |
| Օրական միջին ծախսը, *ԱՄՆ դոլար* | 73.7 | 25.2 | 15.7 | 28.5 | 113.0 | 88.2 | 23.1 | 35.0 | 36.1 |

* *Ծանոթություն: Ծախսերի մեջ ներառված չեն օտարերկրյա տրանսպորտային միջոցներով իրականացված փոխադրումների արժեքը և տուր-փաթեթի արժեքի շուրջ 20%-ը, որը որպես եկամուտ մնում է տուր-օպերատորներին (օտարերկրյա ռեզիդենտներին):*